# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2301, ք. Հրազդան, Կենտրոն, Սահմանադրության հրապարակ, 1 շենք,Հեռ. (+374 223) 2 36 63, 2 37 13, էլ.փոստ kotayk@mta.gov.am


20.04.2022թ.

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ ԵԶԴԻԱԿԱՆ ՆՈՐ-ՏԱՐՎԱ՝
ՄԱԼԱՔԵ-ԹԱՈՒՍԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Եզդիական համայնքի հարգելի՛ ներկայացուցիչներ,

շնորհավորում եմ եզդիական Նոր Տարվա՝ Մալաքե- Թաուսի կապակցությամբ:

Հայ և եզդի ժողովուրդների բարեկամությունը սկիզբ է առել դարերի ընթացքում՝ ամրապնդվելով ու ամրանալով միասին հաղթահարած փորձություններից, տոնած հաղթանակներից, ուրախություններից ու տխրություններից:

Առանձնահատուկ շնորհավորելով հատկապես մեր մարզի եզդիական համայնքին՝ մաղթում եմ, որ Նոր Տարին Ձեզ և Ձեր ընտանիքներին պարգևի սեր, երջանկություն և բարօրություն:

Շարունակենք նույն միասնականությամբ, թիկունք թիկունքի արարել ու շենացնել մեր հայրենիքը:
Շնորհավո՛ր Մալաքե- Թաուս:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՀԱՐՈՆ ՍԱՀԱԿՅԱՆ